«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <Հայերենի շաղկապների ուսուցումը և կիրառումը ժամանակակից մեթոդներով, ՏՀՏ գործիքներով և արդյունավետության գնահատումը 8-րդ դասարանում: Շաղկապների ուսումնասիրությունը Ռաֆֆու <Խենթը> վեպում >

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու

ՀԵՂԻՆԱԿ՝ Բեսալյան Գայանե

ՄԱՐԶ՝ Արագածոտնի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Նորաշենի Ռաֆիկ Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց

https://norashen-aragatsotn.schoolsite.am/?fbclid=IwAR3pcmNVKbV3WcHD5m8Ytue-vkluk22qPQdiB7uyaoJseWHr1rPkr1ranRw

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տիտղոսաթերթ----------1
2. Բովանդակություն ----------2
3. Ներածություն----------3
4. Բուն նյութ----------6
5. Հետազոտության վերաբերյալ հաշվետվություն----12
5. Եզրակացություն----------17
6. Գրականության ցանկ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզվում կան բառեր, որոնք իրար են շաղկապում բառեր կամ ամբողջ նախադասություններ: Այդ բառերը միավորվում են շաղկապ խոսքի մասի մեջ: Հա-մեմատենք հետևյալ նախադասությունները. Գիրքը և տետրը դրված են սեղանին: Աշակերտը մտավ դասարան և վերցրեց գիրքը: Նախադասություններից առաջինում և-ը իրար է շաղկապել նախադասության անդամներ, իսկ երկրորդում՝ նախադասություններ: Բառեր և նախադասություններ իրար շաղկապող բառերը կոչվում են շաղկապներ:

Ըստ իրենց շարահյուսական դերի՝ շաղկապները բաժանվում են երկու խմբի՝ համադասական և ստորադասական: Համադասական շաղկապներն իրար են շաղկապում բառեր կամ համադաս, համազոր նախադասություններ, իսկ ստո-րադասական շաղկապները՝ ստորադաս նախադասությունը շաղկապում են գերադասին:

Հայերենի այն խոսքի մասը, որը կապում է նախադասության համազոր անդամներ և համադաս նախադասություններ, կոչվում են համադասական շաղկապներ: Ծաղկապները լինում են երկու տեսակ՝ **համադասական և ստորադասական: Համադասական** կոչվում են այն շաղկապները, որոնք կապակցում են նախադասության համազոր անդամներ և համադաս նախադասություններ: Հայերենի համադասական շաղկապերն՝ **և, ու, բայց, իսկ, կամ, բայց և, մինչև իսկ, բայց և այնպես, և՛... , և՛..., թե՛..., թե՛..., կա՛մ ..., կա՛մ..., ո՛չ..., ո՛չ:**

Օրինակ՝ Բակն **ու** այգին թաղվելն էին ձյան տակ:

Օրինակ՝ Նա ամրացրեց այգու դռնակը *և* շալակեց ցախը:

Համասադական բոլոր շաղկապներից առաջ դրվում է ստորակետ, բացի և, ու կամ շաղկապներից: Եվ, ու, կամ շաղկապներից առաջներից առաջ դնվում է ստորակետ միայն այն դեպքում, երբ հաջորդ համադաս նախադասության ենթական փոխված է լինում:

Օրինակ՝ Նա ամրացրեց այգու դռնակը**, և** Արամը օգնեց նրան շալակելու փայտը:

Օրինակ՝ Դավիթը կոտրում էր փայտերը**, իսկ** նրա ընկերները հավաքում էին դրանք:

Ստորադասական կոչվում են այն շաղկապները՝ որոնք երկրորդական նախադասությունը շաղկապում են գլխավոր նախադասությանը:

Հայերենի ստորադասական շաղկապներն են՝ **որ, թե, եթե, որպեսզի, որովհետև, քանի որ, հենց որ, մինչև որ, մինչև, նախքան, երբ որ, թե և, թեպետ, թեկուզ** և այլն:

Օրինակ՝ **Թե և** նա վաղուց էր գնացել, մենք նրան սիրով էինք հիշում:

Օրինակ՝ Նա մտածում էր, **որ** մի օր կգրի թագավորի ճամփորդության մասին:

Համադասական նախադասություններ:

1. Ես բարձրացնում էի ծանր պայուսակներ, **ո՛չ Արամը, ո՛չ** Նարեկը ինձ չօգնեցին:
2. Ես հոգնած էի **բայց** շարունակում էի խաղալ:
3. Հիմա խոսացեք հանգիստ **կամ** լքեք սրահը:
4. Անին գնաց տուն **և** հետ վերադարձավ իր հետ բերելով իր տետրը:
5. Ես գիտեմ, **որ** Գայանեն **ու** Նազենին լավ ընկերուհիներ են:

Ստորադասական նախադասություններ:

1. Արամը սովորում է լավ անգլերեն, **որպիսզի** կարողանա բարձր գնահատականներով ընդունվի համալսարան:
2. Ես կսկսեմ հանգիստ խոսել քեզ հետ, **երբ որ** դու լսես ինձ:
3. Ես սկսել եմ ուսումնասիրել անգլերեն լեզուն ավելի խորը, **քանի որ** ինձ հետագայում շատ է պետք այդ լեզուն:
4. Ես սիրում եմ զրուցել Լանաի հետ շատ, **որովհետև** ինձ նրա հետ խոսելը հաճելի է:
5. Ես սիրում եմ վազել, **նախքան** դասի գալս:

https://znanio.ru/media/-2792907

* * *

Առաջադրանք - Կատարել հետազոտական աշխատանք «Շաղկապ» թեմայով:

Աշխատանքի ձևը - Արտադասարանային հետազոտություն, դասարանական քննարկումներ, ընդհանրացնել և համակարգել ուսումնասիրված թեմայի վերաբերյալ գիտելիքները և ներկայացնել:

Նպատակը– Ամրապնդել ու հիմնավորել գիտելքները՝ որոնողական աշխատանքների մղմամբ

Անձնային – Ձևավորել սովորողների մեջ հաստատուն, ուսուցանող, գիտելիքահեն մոտիվացիա և ինքնադաստիարակման պատրաստակամություն:

Ուսուցանող– Գործընթացի արդյունքների և ընթացքի գնահատում, փաստերի ընդհանրացում և համեմատում, խելամիտ և հիմնավորված մտքերի կառուցում, համադասարանցիների կատարած աշխատանքների գնահատում, աշխատել ներկայացված առաջադրանքին համապատասխան, համեմատել ստացված արդյունքները սպասելիքների հետ:

Համագործակցություն– Խմբում աշխատելու ունակություն, սեփական դիրքորոշումը մյուսներին հասցնելու կարողություն, արտահայտել սեփական կարծիքը և փորձել այն հիմնավորել՝ բերելով փաստեր և օրինակներ:

Ձևավորող կոմպետենցիաներ – Լեզվական կոմպետենցիա և գրագիտություն, սովորել սովորելու կոմպետենցիա, ինքնաճանաչողական և սոցիալական կոմպետենցիա, թվային և մեդիա կոմպետենցիա:

Մեթոդներ կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված- Մտագրոհ, առանցքակալ/կրկնակի շրջան/, մտածել, քննարկել, հետազոտել, ուսումնասիրել, հարստացնել գիտելիքները

Առաջադրանքի անցկացման պլան

Առաջադրանքի փուլերը	Ուսուցչի գործողությունները	Սովորողների գործողությունները	Արդյունքների գնահատման կոմպետենցիաներ
1. Խմբերի բաժանում	Ուսուցիչը ներկայացնում է նախագծային աշխատանքի էությունը, առաջարկում է մեկ թեմա՝ <<Շաղկապ>>: Թեման ընտրելուց հետո ուսուցիչը ստեղծում է	Սովորողները ընտրում են <<Շաղկապ>> թեման, սովորողները փորձում են ինքնուրույն բաժանվել խմբերի: Ձևավորում են 2 խումբ՝ 4 և 5 հոգուց բաղկացած, ովքեր կարող	Սովորողների ինքնակազմակերման կարողություններ

	աշխատանքային խմբեր: Նախագիծը իրականացնում է խմբերով: Ընտրում է խմբերի ղեկավարներ, ովքեր կհամակարգեն խմբի անդամների աշխատանքը: Կատարում է աշխատանքի բաժանում:	են զույգերով աշխատել: Խմբերում ընտրվում է ավագ: Խմբերը աշխատանքային գործունեության ընթացքում ընտրելու են անուններ, որոնցով հանդես կգան թիմային աշխատանքի ներկայացման ընթացքում:	
2. Յուրաքանչյուր խմբին հանձնարարություն	Ուսուցիչը հանձնարարում է **1-ին խումբ** 1. Ուսումնասիրել «Համադասական շաղկապներ» թեման, կատարել նշումներ, Ռաֆֆու ¦Խենթը§ վեպից դուրս գրել համադասական շաղկապները, դասդասել և կատարել վիճակագրություն , ներկայացնել ՏՀՏ գործիքների միջոցով: **2-րդ խումբ** 1. Ուսումնասիրել «Ստորադասական շաղկապներ» թեման, կատարել նշումներ, Ռաֆֆու ¦Խենթը§ վեպից դուրս գրել	Սովորողները գրանցում են առաջադրանքը և իրենց խմբերում կատարում աշխատանքի բաշխում:	Առաջադրանքը ընկալելու, գրառելու և խմբում միասնական աշխատանքի բաժանում կատարելու կարողություն Թվային և մեդիա կոմպետենցիա

	համադասական շաղկապները, դասդասել և կատարել վիճակագրություն , ներկայացնել ՏՀՏ գործիքների միջոցով:		Սովորել սովորելու կոմպետենցիա
3.Սահմանվում է նախնական հետազոտության ժամկետ՝ 1 շաբաթ	Հետազոտական աշխատանքն իրականացնելու համար հատկացվում է 2 շաբաթ ժամանակ: Մեկ շաբաթ հետո ուսուցիչը կատարում է հարցում՝ կատարված աշխատանքների վերաբերյալ: Ուսուցիչը կատարում է աշխատանքի ընթացիկ քննարկում: Անդրադառնում է թերություններին, առաջարկություններ է անում, կատարում համապատասխան փոփոխություններ: Քննարկումների արդյունքում սովորողները ստանում են նոր առաջադրանքներ:	1-ին շաբաթում սովորողները կազմակերպում են հանդիպում ուսուցչի հետ, քննարկում աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրները: Խմբերը տեղեկացնում են, թե ինչ հաջողություններ և ինչ դժվարություններ են ունեցել այդ ընթացքում:	Իրավիճակի գնահատման և առաջացած խնդիրների վեր հանման կարողություն Լեզվական կոմպետենցիա և գրագիտություն Ինքնաճանաչողական և սոցիալական կոմպետենցիա
1. Հաջորդող 2-րդ շաբաթում պատրաստվում են վերջնական արդյունքների	Ուսուցիչը հանձնարարում է վերջնական տեսքի բերել հավաքագրված նյութերը՝ հաշվետու դասին ներկայացնելու	Ներկայացման համար սովորողները ընտրում են <<Կլոր սեղան>> հանդիպման տարբերակը: Խմբերը	Տվյալների հավաքագրման, վերլուծության և ներկայացման

ներկայացմանը	համար: Ուսուցիչը նախագծային աշխատանքի մասին տեղյակ է պահում մեթոդմիավորման նախագահին, քննարկում սպասվելիք նախագծային դասի ներկայացման ու արդյունքների քննարկման վերաբերյալ հարցեր: Ուսուցիչը որոշում է դասին հրավիրել տնօրենությանը, այլ ուսուցիչների, սովորողների: Ուսուցիչը ապահովում է սովորողներին անրաժեշտ նյութերով և դպրոցում առկա տեխնիկայով: Միասին մշակում են նաև գնահատման ձևաչափը:	կատարում են վերջնական վերլուծություն, արդյունքների և համապատասխան օրինակների ձևակերպում, պատրաստվում են հաշվետու դասին ներկայացնել իրենց կատարած աշխատանքները: Թիմերը ներկայանում են իրենց հետաքրքիր աշխատանքներով:	կարողություն՝ խմբում:
2. Հաշվետու դաս	Ուսուցիչը պատրաստում է յուրաքանչյուր խմբին հանձնարարված թեմայի վերաբերյալ հարցեր, որոնք պետք է տալ յուրաքանչյուր խմբին՝ ներկայացումից հետո: Դրանք կարող են լինել նաև առաջադրանքի տեսքով: Նույնը հանձնարարում է նաև խմբերին, որպեսզի ներկայացման ընթացքում ուշադիր լսեն և գրանցեն 2 հարց՝ մյուս խմբերից յուրաքանչյուրին տալու համար:	Յուրաքանչյուր խումբ պատրաստվում է պատասխանել իրենց հանձնարարության հավանական հարցերին, ինչպես նաև ծանոթանում է մյուս խմբերի հանձնարարություններին, ներկայացման ժամանակ ուշադիր լսում են միմյանց և գրանցում հարցեր, որոնցից խմբով կընտրեն երկուսը: Խմբերին տրվող հարցերի	Լսելու, հասկանալու, հարցեր ձևակերպելու և տրվող հարցերին սպառիչ պատասխան տալու կարողություն:

		պատասխանները քննարկվում են խմբերում, ապա ներկայացվում:	
3. Հաշվետու դաս – 2 դասաժամ(ուսուցչի ընտրությամբ) 4. Վերջնական աշխատանք	Ուսուցիչը կիրառում է 3-2-1 մեթոդը. Թիմերը պետք է կազմեն 1 կարևոր միտք՝ այս նախածի հետ կապված, 1 բառակապակցություն և 1 բառ: Հանձնարարում է պատրաստել սահիկահանդես՝ ընդգրկելով յուրաքանչյուրխմբի հետազոտությունը: Խմբերը ակտիվ կհամագործակցեն իրար հետ:	Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, կատարում եզրակացություններ և պատասխանում հարցերին, ձևակերպում 3-2-1 մեթոդի վերաբերյալ իրենց մտքերը: Տրամադրվում է 20-25 րոպե յուրաքանչյուր խմբին:	Հստակ և համոզիչ խոսելու, եզրակացություններ կատարելու և ներկայացնելու կարողություն
5. Ամփոփում	Ուսուցիչը ամփոփում է, հրավիրվածները հայտնում են կարծիքներ:	15 րոպե ամփոփում: Padlet- https://padlet.com/harutyunyanhasmik85/Bookmarks	

Նպատակը	Գիտելիքների ձեռքբերում առավել արդյունավետ եղանակով,ամրապնդել ու հիմնավորել

Հետազոտության վերաբերյալ հաշտվետվություն

	գիտելիքները՝որոնողական աշխատանքների մղմամբ
Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լեզվական կոմպետենցիա , սովորել սովորելու, թվային և մեդիա կոմպետենցիաներ
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Պլանավորում-նախագծային մեթոդ, ՏՀՏ մեդիագրագիտություն
Օգտագործված մեթոդները	Մտագրոհ,առանցքակալ /կրկնակի շրջան/, ավտոբուսի կանգառ, մտածել, քննարկել, կիսել /Think-Pair-Share/
Իրականացման ժամանակահատվածը	2 շաբաթ
Թիրախ խումբը /քանակ, սեռային բաշխում/	Աշակերտներ՝ 5 տղա, 4 աղջիկ
Իրականացման վայրը • Դպրոցը • Դասարանը	Դասարանը
Գործընթացի համառոտ նկարագրություն /տպավորություններ, կարծիքներ,	Գործընթացի ընթացքում աշակերտները ցուցաբերեցին

դժվարություններ/	ակտիվ մասնակցություն, ոգևորվածություն, ժամանակակից մեթոդներով և ՏՀՏ գործիքներով աշխատանքը թեև դժվար էր , սակայն աշակերտներն իրենց ակտիվ մասնակցությամբ և համալիր աշխատանքով դարձրին հեշտ և հետաքրքիր, զարգացրին իրենց ստեղծագործական միտքը, փորձեցին իրենց ստացած տեսական գիտելիքն ամրապնդել գործնականում, համեմատել գերմաներենի հետ, ակնառու դարձնել նմանություններն ու տարբերությունները կիրառելիս, ինչը հաջողվեց, աշակերտները կարողացան հաղթահարել դժվարություններն ու դասը դարձնել հետաքրքիր:
Վեր հանված՝ • Արդյունքներ/արտադրանք • Եզրակացություններ	Դասի ընթացքում աշակերտները ցուցաբերեցին ակտիվ մասնակցություն, ոգևորվածություն, զարգացրին իրենց ստեղծագործական միտքն ու ամրապնդեցին գիտելիքները գործնականում,կարողացան

	համադրել ժամանակակից ՏՀՏ գործիքներն ու ստացած տեսական գիտելիքները՝ հասնելով բավականին լավ արդյունքի:Աշակերտները հայերենի շաղկապները համեմատեցին գերմաներենի շաղկապների հետ՝ վեր հանելով լեզուների միջև կիրառական նմանություններն ու տարբերությունները: Համեմատելով նախորդ տարիների աշակերտների ակտիվության ու թեմայի յուրացման հետ՝ ժամանակակից մեթոդներով ու ժամանակակից տեխնիկայով արդյունավետությունն ակնհայտ էր, աշակերտների ներգրավվածությունն ու ոգևորությունը հասնում էր առավելագույնի, երեխաները մղվեցին որոնողական աշխատանքի, նորարարության, ու նրանցում ձևավորվեցին անհատական պատկերացում ու մոտեցում տվյալ թեմային վերաբերող, ինչը ամբողջացվեց և դարձավ համալիր աշխատանք:

Այլ տեղեկատվություն	
Հաշվետվության կցված նյութեր • Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ	Padlet- https://padlet.com/harutyunyanhasmik85/ibxt0e2y6vgexvi Google Slides- https://docs.google.com/presentation/d/1wG-ThDK1QegZCXeSXaTvGQBJDMAxM3kUBhZo00RCfJQ/edit?usp=sharing Padlet- https://padlet.com/harutyunyanhasmik85/Bookmarks

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անհերքելի ճշմարտություն է, որ մարդու, հատկապես երեխայի հիշողության մեջ ավելի երկար են մնում և նույնիսկ անմոռաց դառնում այն դեպքերը, երևույթները, իրերն ու առարկաները, որոնք նա ընկալել է սեփական զգայարաններով, քան նրանք, որոնց մասին լսել է ուրիշներից, կարդացել գրքերում: Դրա համար անհրաժեշտ է, որ սովորողներն իրենք մոտիկից ծանոթանան խնդրին, իրենք ուսումնասիրություններ կատարեն, իրենք փնտրեն ու գտնեն թեմային վերաբերող հարցերի պատասխաններն ու լուծումները, իրենք հակադրվեն ու համդրվեն միմյանց: Ստացվեց հետաքրքիր աշխատանք՝ <<Շաղկապ>> թեմայի համալիր մշակում՝ տեսականից մինչև կիրառում: Սովորողների մոտ ձևավորվեցին շատ կոմպետենցիաներ, իրենք լավ տպավորություններով, հետաքրքիր պաստառներով, ոգևորված ավարտեցին դասը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայոց լեզու 8-րդ դասարան 2012թ.

2. Զևաբանություն Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան 2009թ.

3. Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն Ա.Պապոյան, Խ.Բաղիկյան 2003թ.

4. Շարահյուսություն Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան 2009թ.

5. Մեդիա հարթակներ